«ԷլՍի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Էր» ՍՊԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Օգոստոս 2023
Երևան

«ԷլՍի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Արմ» ՍՊԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Հագուստի և պարագաների մանրածախ վաճառք
Տնօրեն՝	Գիորգի Դալալիշվիլի

Հեռ. [illegible] 528850
էլ. փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անտառաթի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Էլ Սի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Ար» ՍՊԸ բաժնետերերին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էլ Սի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Ար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

31.12.2022թ.-ի դրությամբ Ընկերության պաշարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված է 1.4 միլիարդ դրամ (31.12.2021՝ 0.8 միլիարդ դրամ), որը մեծամասամբ ներկայացնում է մանրածախ վաճառքի արագ շրջանառվող բազմատեսակ հագուստներ և պարագաներ: Մենք չենք մասնակցել հաշվետու ամսաթվով պաշարների գույքագրման գործընթացին: Ուստի, հաշվի առնելով պաշարների բնույթը, մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ պաշարների առկայության վերաբերյալ: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել՝ արդյոք անհրաժեշտ է կատարել նշված գումարների, ինչպես նաև տվյալ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում որպես վաճառքի ինքնարժեք արտացոլված 4.6 միլիարդ դրամ գումարի ճշգրտում: Նաև, այս պատճառով, մենք անկարող էինք որոշել հաշվետու տարվա շահութահարկի գծով ծախսի և պարտավորության արտացոլված գումարի ճշգրտման հնարավոր անհրաժեշտությունը:

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀՄԷՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքը հիմնավորելու համար:

BDO

Հեռ. +374 60 628899
էլ. փոստ: info@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անիպեմի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ

Հեռ. +374 60 526899
էլ. փոստ: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/4, 5-րդ հարկ, տարածք 7

իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառում:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Սերգեյ Տակուկին, FCCA
Աուդիտի ղեկավար

9 օգոստոսի 2023թ.
Երևան

«Էլ Սի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Ար» ՍՊԸ
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Հասույթ	5	8,514,012	6,317,267
Վաճառքի ինքնարժեք	6	(4,647,328)	(4,120,396)
Համախառն շահույթ		**3,866,684**	**2,196,871**
Այլ եկամուտ		48,902	3,948
Վարչական ծախսեր	7	(94,225)	(74,771)
Իրացման ծախսեր	8	(2,304,606)	(1,909,577)
Այլ գործառնական ծախսեր	9	(148,224)	(130,726)
Գործառնական շահույթ		**1,368,531**	**85,745**
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(կորուստ)		(55,190)	26,533
Շահույթ մինչև հարկումը		**1,313,341**	**112,278**
Շահութահարկի գծով ծախս	10	(298,647)	(35,626)
Տարվա շահույթ		**1,014,694**	**76,652**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**1,014,694**	**76,652**

6-ից 28-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. օգոստոսի 9-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Գիորգի Դաբաղյան
Տնօրեն

Նարինե Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

«Էլ Սի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Ար» ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	31.12.2022թ. հազ. դրամ	31.12.2021թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	1,373,410	820,110
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	106,175	21,860
Դրամական միջոցներ	13	1,078,361	529,195
		2,557,946	**1,371,165**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14	1,615,663	1,542,386
Ոչ ընթացիկ կանխավճարներ		18,468	18,468
Հետաձգված հարկային ակտիվներ	10	119,226	94,395
Ոչ նյութական ակտիվներ		20,613	25,712
		1,773,970	**1,680,961**
Ընդամենը ակտիվներ		**4,331,916**	**3,052,126**
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	238,671	233,618
Վերադարձի փոխհատուցման գծով պահուստ	5	69,948	50,883
Շահութահարկի գծով պարտավորություն		284,381	43,403
		593,000	**327,904**
Ընդամենը պարտավորություններ		**593,000**	**327,904**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		1,299,260	1,299,260
Կուտակված շահույթ		2,439,656	1,424,962
Ընդամենը սեփական կապիտալ	17	**3,738,916**	**2,724,222**
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		**4,331,916**	**3,052,126**

«Էլ Սի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Ար» ՍՊԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2022 հազ.դրամ	2021 հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ		10,219,314	7,581,018
Այլ եկամուտ		7,401	1,438
Մատակարարներին վճարումներ (ներառյալ հարկերը)		(6,569,323)	(5,639,112)
Շահութահարկի վճարում		(46,619)	(51,950)
Հարկերի վճարում		(2,078,589)	(1,265,908)
Աշխատակիցների գծով վճարումներ		(447,352)	(346,145)
Այլ		(80,493)	(55,532)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**1,004,339**	**223,809**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(360,782)	(13,616)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		-	(8,329)
Ներդրումային գործունեությունից ստացված (դրանում օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**(360,782)**	**(21,945)**
Ֆինանսական գործունեությունից ստացված (դրանում օգտագործված) զուտ դրամական միջոցներ		-	-
Դրամական միջոցների զուտ (նվազում) աճ		**643,557**	**201,864**
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի		529,195	330,750
Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություններից օգուտ/(վնաս)		(94,391)	(3,419)
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	13	**1,078,361**	**529,195**

«Էլ Սի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Արմ» ՍՊԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ
Մնացորդ հունվարի 1, 2022	**1,299,260**	**1,424,962**	**2,724,222**
Տարվա համապարփակ արդյունք			
Տարվա շահույթ		1,014,694	**1,014,694**
Մնացորդ դեկտեմբերի 31, 2022	**1,299,260**	**2,439,656**	**3,738,916**
	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ
Մնացորդ հունվարի 1, 2021	**1,299,260**	**1,348,310**	**2,647,570**
Տարվա համապարփակ արդյունք			
Տարվա շահույթ	-	**76,652**	**76,652**
Մնացորդ դեկտեմբերի 31, 2021	**1,299,260**	**1,424,962**	**2,724,222**

Բովանդակություն

1. Ընկերության մասին 11
2. Պատրաստման հիմքերը 12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 12
4. Ֆինանսական գործիքներ՝ ռիսկերի կառավարում 13
5. Հասույթ 17
6. Վաճառքի ինքնարժեք 17
7. Վարչական ծախսեր 17
8. Իրացման ծախսեր 18
9. Այլ գործառնական ծախսեր 18
10. Շահութահարկի գծով ծախս 18
11. Պաշարներ 20
12. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 20
13. Դրամական միջոցներ 20
14. Հիմնական միջոցներ 21
15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 22
16. Վարձակալություն 22
17. Կանոնադրական կապիտալ 23
18. Գործարքներ կապակցված կողմերի հետ 23
19. Պայմանական պարտավորություններ 24
19.1. Ապահովագրություն 24
19.2. Պայմանական պարտավորություններ և պահուստներ 24
19.3. Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ 24
19.4. Երաշխիքներ 24
19.5. Հարկային պարտավորվածություններ 24
19.6. Գնման պարտականություններ 24
20. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր 24
21. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 25

1. Ընկերության մասին

«ԷլՍի Ուայկիկի Ռիթեյլ Էյ Էր» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է: Ընկերությունը գրանցվել է 2014թ. ապրիլի 11-ին: Ընկերությունը գործունեությունը ծավալում է ՀՀ-ում և հիմնականում զբաղվում է հագուստի և պարագաների մանրածախ վաճառքով:
Ընկերության բաժնետերերն են ԷլՍի Ուայկիկի Ջի Ի ՍՊԸ-ն՝ 99,9% և Թեմա Ռիթեյլ Էր Յու-ն՝ 0,1%:

Ընկերության աշխատողների թվաքանակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 224 աշխատակից (2021թ.՝ 185 աշխատակից):

Ընկերության իրավաբանական հասցեն է ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճ. 3:

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտը բնութագրվում է որպես անկայուն, մասնավորապես՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի, ընդդեմ Արցախի հանրապետության, սանձազերծած պատերազմից հետո: Քաղաքական և տնտեսական ճգնաժամերի էական նախադրյալները իրենց հերթին բերում են ներդրողների ընդհանուր տրամադրվածության նվազման և ֆինանսական շուկաներում անորոշությունների և տատանումների ավելացման:

ՀՀ տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դեպի ՀՀ տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և ՌԴ առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության վրա:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

COVID-19: 2020թ. մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի համաճարակը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության զսպմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինը, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները: Վերոնշյալ միջոցառումների մի մասը հետագայում մեղմացվել է, իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանափակումներ գրեթե չկային: Սակայն կար ռիսկ, որ կարող են լրացուցիչ սահմանափակումներ կիրառվել հետագա ժամանակաշրջաններում՝ վիրուսի նոր տեսակների ի հայտ գալով պայմանավորված:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ընկերության ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

2. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ներքո: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՓՄԿ-ների ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխություններ
Առկա չեն փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 01.01.2022թ.-ից հետո, և որոնք ունեցել են նշանակալի ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների փոփոխություններ
Առկա չեն հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած փոփոխությունները, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան էական ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Անընդհատության սկզբունք
Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվությունները շարունակական գործունեության հիմունքներով: Այս դատողությունը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների շահութաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, Ծանոթագրություն 1-ում նկարագրված իրադարձությունների բացասական հետևանքները, ընթացիկ մտադրությունները, շահութաբերությունը, ֆինանսական ռեսուրսների առկայությունը: Վերոնշյալ հանգամանքները, սակայն, էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության գործունեության վրա: Ավելին, 2022 թվականին Ընկերությունը գործել է շահույթով և գեներացրել է դրական դրամական հոսքեր: Գնահատումներ կատարելուց հետո Ընկերության ղեկավարությունը ողջամիտ ակնկալիք ունի, որ Ընկերությունը տեսանելի ապագայում կկարողանա շարունակել իր գործառնական գոյությունը: Հետևաբար, ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս շարունակում է կիրառել անընդհատության սկզբունքը և հաշվետվություններում առկա չեն ճշգրտումներ, որոնք անհրաժեշտ կլինեին, եթե Ընկերությունը ունակ չլիներ շարունակել անընդհատ գործել:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տե՛ս Ծանոթագրություն 21): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

Պաշարների արժեզրկման պահուստ (Ծանոթագրություն 11)

Ընկերությունը յուրաքանչյուր տարվա վերջում գնահատում և ճանաչում է արժեզրկման հայտանիշ ունեցող պաշարների, մասնավորապես դանդաղաշարժ կամ հետագա օգտագործման համար ոչ պիտանի պաշարների գծով, արժեզրկման գումարը:

Շահութահարկ և տրանսֆերային գնագոյացում (Ծանոթագրություն 10)

Ընկերությունը ենթակա է շահութահարկով հարկման Հայաստանի Հանրապետությունում: Ձեռնարկատիրական բնականոն գործունեության պայմաններում որոշ գործարքների և հաշվարկների գծով առկա է որոշակի անորոշություն: Արդյունքում, Ընկերությունը ճանաչում է հարկային պարտավորությունները՝ ելնելով այն գնահատումներից, թե արդյոք կառաջանան լրացուցիչ հարկեր և տոկոսներ: Այդ հարկային պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ չնայած Ընկերության այն համոզմունքի, որ հարկային հաշվարկը հիմնավոր է՝ այնուամենայնիվ, ընկերությունը գտնում է, որ որոշ դրույթներ հարկային մարմինների կողմից հավանական է, որ լիովին հիմնավորված չհամարվեն:

2020թ. հունվարից տրանսֆերային գնագոյացման ուժի մեջ մտնելու ազդեցությունը իր հերթին ստեղծում է լրացուցիչ անորոշություններ և գնահատումներ կատարելու անհրաժեշտություն: Ելնելով մի շարք գործոնների գնահատումից, այդ թվում՝ նախկին փորձից և հարկային օրենսդրության մեկնաբանություններից՝ Ընկերությունը գտնում է, որ հաշվեգրված հարկային պարտավորությունները խելամիտ են: Վերոնշյալ գնահատումը հիմնված է ենթադրությունների և գնահատումների վրա, որոնք կարող են ներառել ապագա իրադարձությունների վերաբերյալ մի շարք դատողություններ: Տարբերությունները կարող են ազդել շահութահարկի ծախսի վրա, այն չափով, որքանով վերջնական հարկային արդյունքը տարբերվում է հաշվառված գումարից:

4. Ֆինանսական գործիքներ՝ ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ:

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին:

Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական ակտիվներ	*Ամորտիզացված արժեք*	
	2022	**2021**
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,078,361	529,195
	1,078,361	**529,195**

Ֆինանսական պարտավորություններ	*Ամորտիզացված արժեք*	
	2022	**2021**
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	164,674	222,841
	164,674	**222,841**

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության ղեկավարությունը ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման, նպատակների և քաղաքականության համար: Ղեկավարությունը ամսական հաշվետվություններ է ստանում Ընկերության գլխավոր հաշվապահից՝ դրանով իսկ հաստատելով գործընթացների արդյունավետությունը և դրանց համապատասխանությունը սահմանված նպատակներին ու քաղաքականությանը:
Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը գրեթե չի ենթարկվում պարտքային ռիսկի, քանի որ վաճառքը կատարվում է համապատասխան գումարը ստանալուց հետո: Միայն բացառիկ դեպքերում, եթե դուրս է գրվում հարկային հաշիվ, վճարումը կատարվում է վաճառքից հետո:

Առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին ընդհանուր առմամբ արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային պարտավորություններում: Պոտենցիալ ենթարկվածությունը պարտքային ռիսկին նվազեցնելու նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր փոխադարձ մարման ազդեցությունը էական չէ:

2022թ.-ի և 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին սահմանափակվում է վերը ներկայացված ֆինանսական ակտիվների մնացորդներով (տե՛ս (բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով).

Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և բանկերում ու ֆինանսական հաստատություններում ներդրած ավանդներից: Վերջիններիս դեպքում ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող կողմերը:

Դրամական միջոցներ բանկում և կարճաժամկետ ավանդներ

Զգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում՝

	31 դեկտեմբեր 2022	31 դեկտեմբեր 2021
	Դրամական միջոցներ բանկերում Հազ, դրամ	Դրամական միջոցներ բանկերում Հազ, դրամ
Առաջատար 5 հայկական բանկերում (վարկանիշ Ba3 Moody's)	925,876	424,543
Վարկանիշ B1 Moody's	5,647	5,670
Վարկանիշ B2 Moody's	1,163	1,644
	932,686	**431,857**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից:

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքների (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) փոփոխության պատճառով և այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:
Ընկերության ենթարկված չէ տոկոսադրույքային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված են վերջինիս ֆունկցիոնալ արժույթից /ՀՀ դրամ/ տարբեր արժույթով: Ընկերության քաղաքականության համաձայն՝ թույլատրվում է ֆունկցիոնալ արժույթով պարտավորությունները հնարավորության դեպքում մարել տվյալ արժույթով արտահայտված գործարքներից ստացված դրամական միջոցներով:

Ընկերության արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է դոլարով կատարված օտարերկրյա մատակարարներից արտարժույթով իրականացված ձեռքբերումներից:
Այլ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև (արտարժույթի մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով).

	2022թ. ՀՀ դրամ	2021թ. ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	393.57	480.14

2022թ. և 2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ներկայացված է ստորև՝

	ԱՄՆ դոլար	
	31.12.2022թ. հազար դրամ	31.12.2021թ. հազար դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	773,261	321,823
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**773,261**	**321,823**
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	555	57,561
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**555**	**57,561**
Զուտ դիրքը	**772,706**	**264,262**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը (արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը) աճին հարկումից հետո՝ 63,362 հազար դրամի չափով (2021թ.՝ 21,669 հազար դրամ) :

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է ապահովել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետներում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները.

	Մինչև 3 ամիս Հազ.դրամ	Ընդամենը չզեղչված պարտավորություններ Հազ.դրամ	Հաշվեկշռային արժեք Հազ.դրամ
2022թ.դեկտեմբերի 31			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	164,674	164,674	164,674
	164,674	**164,674**	**164,674**

	Մինչև 3 ամիս Հազ.դրամ	Ընդամենը չգեղչված պարտավորություններ Հազ.դրամ	Հաշվեկշռային արժեք Հազ.դրամ
2021թ.դեկտեմբերի 31			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	222,841	222,841	222,841
	222,841	**222,841**	**222,841**

5. Հասույթ

Ստորև աղյուսակում Ընկերությունը բաժանել է հասույթը տարբեր կատեգորիաների վերջինիս բնույթը, գումարը, ժամկետը և անորոշությունը պատկերելու նպատակով.

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Հասույթ ապրանքների վաճառքից (Հայաստան՝ տեղական շուկա)	8,514,012	6,317,267
	8,514,012	**6,317,267**

Հասույթի ճանաչման պահ	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Ժամանակի որևէ պահին	8,514,012	6,317,267
	8,514,012	**6,317,267**

Ընկերությունը՝ ելնելով պատմական փորձի վրա, գնահատում է ապրանքների գծով հետ վերադարձումները և 31.12.2022թ. դրությամբ ճանաչել է 69,948 հազար դրամի պահուստ (31.12.2021թ. ՝ 50,883 հազար դրամ):

6. Վաճառքի ինքնարժեք

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Ապրանքների ինքնարժեք	4,647,328	4,120,396
	4,647,328	**4,120,396**

7. Վարչական ծախսեր

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Հատուցումներ աշխատակիցներին	39,135	27,779
Խորհրդատվական ծախսեր	24,194	19,478
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա ծախսեր (ծան. 14)	5,892	8,848
Վարձակալության ծախսեր (ծան. 16)	5,333	4,889
Այլ	19,671	7,287
	94,225	**68,281**

8. Իրացման ծախսեր

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Վարձակալության ծախսեր (ծան. 16)	778,896	613,130
Հատուցումներ աշխատակիցներին	573,632	433,342
Մաշվածություն և ամորտիզացիա (ծան. 14)	293,698	278,751
Ակտիվների ընթացիկ վերանորոգման և պահպանման ծախսեր	123,480	117,627
Ներմուծված ապրանքների մաքսային պահպանության և մաքսազերծման ծախսեր	-	114,649
Մաքրման ծառայություններ	70,500	88,634
Կոմունալ ծախսեր	42,655	41,126
Բանկային միջնորդավճարներ	53,935	31,506
Բեռնափոխադրման, մարքեթինգային և ապահովագրական ծախսեր	43,647	24,393
Նյութերի ծախսագրում	107,764	22,658
Այլ ծախսեր	216,399	143,761
	2,304,606	**1,909,577**

9. Այլ գործառնական ծախսեր

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Պաշարների պակասորդի և կորստի գծով ծախսեր	49,268	94,511
Նվիրատվության գծով ծախսեր	45,068	
Բանկային փոխարժեքի և ԿԲ փոխարժեքի տարբերություն	7,571	19,555
Չփոխհատուցվող հարկերի գծով ծախսեր	44,271	10,216
Կանխավճարի արժեզրկում (ծան.13)	-	4,870
Այլ ծախսեր	2,046	1,574
	148,224	**130,726**

10. Շահութահարկի գծով ծախս

	2022թ. հազ. Դրամ	2021թ. հազ. Դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	323,478	55,666
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային փոխհատուցում	(24,831)	(20,040)
Ընդամենը շահութահարկի գծով հարկային ծախս	**298,647**	**35,626**

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկի դրույքաչափը 18% է (2021թ՝ 18%):

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2022թ.		2021թ.	
	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Շահույթ(վնաս)/ հարկումից առաջ	**1,313,341**		**112,278**	
Շահութահարկ	236,401	18%	20,210	18%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր, զուտ	68,594	5%	15,416	14%
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	(6,348)	(0%d)		
Ժամանակաշրջանի շահութահարկի գծով ծախս	**298,647**	**23%**	**35,626**	**32%**

Հաշվետու տարվա հետաձգված հարկը հաշվարկվել է կիրառելով 18% դրույքը (2021թ.՝ 18%) :
Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

	2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին հազ. դրամ	2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. Դրամ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,702	-	1,702
Հիմնական միջոցներ	83,282	21,493	104,775
Հետվերադարձի գծով պահուստ	9,159	3,432	12,591
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	252	(94)	158
	94,395	**24,831**	**119,226**

	2020թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին հազ. դրամ	2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. Դրամ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,702	-	1,702
Հիմնական միջոցներ	62,380	20,902	83,282
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	58	194	252
Հետվերադարձի գծով պահուստ	10,215	(1,056)	9,159
	74,355	**20,040**	**94,395**

11. Պաշարներ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Ապրանքներ պահեստում	1,354,377	806,816
Արագամաշ առարկաներ	19,033	13,294
	1,373,410	**820,110**

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 4,819,400 հազար դրամ (2021թ.՝ 4,220,775 հազար դրամ):

12. Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Առնտրային դեբիտորական պարտքեր	-	-
Ամորտիզացված արժեքով դասակարգված ֆինանսական ակտիվներ	-	-
Մատակարարներին տրված կանխավճարներ	114,175	28,660
Կանխավճարների գծով պահուստ	(9,455)	(9,455)
Կանխավճարված հարկեր	-	
Այլ	1,455	**2,655**
	106,175	**21,860**

13. Դրամական միջոցներ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ բանկերում ԱՄՆ դոլարով	773,261	321,823
Դրամական միջոցներ բանկերում ՀՀ դրամով	159,425	110,034
Դրամական միջոցներ ճանապարհին	123,786	73,748
Դրամարկղում	21,889	23,590
	1,078,361	**529,195**

14. Հիմնական միջոցներ

	Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ նորոգումներ	Մեքենաներ, սարքավորումներ	Արտադրական և տնտեսական գույք, այլ հիմնական միջոցներ	Շահագործման համար ոչ մատչելի գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք կամ պայմանական արժեք	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**	**հազ. դրամ**
Մնացորդը առ 01.01.2021թ.	**2,300,066**	**113,089**	**215,256**	-	**2,628,411**
Ավելացումներ	-	34	13,881	-	13,915
Մնացորդը առ 31.12.2021թ.	**2,300,066**	**113,123**	**229,137**	-	**2,642,326**
Ավելացումներ	254,691	27,858	70,268	7,965	**360,782**
Մնացորդը առ 31.12.2022թ.	**2,554,756**	**140,982**	**299,405**	**7,965**	**3,003,108**
Կուտակված մաշվածություն					
Մնացորդը առ 01.01.2021թ.	**696,012**	**105,828**	**29,770**	-	**831,610**
Տարվա ծախս	230,132	7,254	30,944	-	268,330
Մնացորդը առ 31.12.2021թ.	**926,144**	**113,082**	**60,714**	-	**1,099,940**
Տարվա ծախս	238,721	12,093	36,691	-	**287,505**
Մնացորդը առ 31.12.2022թ.	**1,164,865**	**125,175**	**97,405**	-	**1,387,445**
Զուտ հաշվեկշռային արժեք					
Մնացորդը առ 01.01.2021թ.	**1,604,054**	**7,261**	**185,486**	-	**1,796,801**
Մնացորդը առ 31.12.2021թ.	**1,373,922**	**42**	**168,423**	-	**1,542,386**
Մնացորդը առ 31.12.2022թ.	**1,389,891**	**15,807**	**202,000**	**7,965**	**1,615,663**

648 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը ճանաչվել է վարչական ծախսերում (2021թ.՝ 264 հազար դրամ), իսկ 286,857 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը ճանաչվել է իրացման ծախսերում (2021թ.՝ 268,066 հազար դրամ):
Ընկերության հիմնական միջոցները գրավադրված չեն 31 դեկտեմբեր 2022թ. և 31 դեկտեմբեր 2021թ.-ի դրությամբ:

15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Կապակցված կողմերի մասով առևտրային կրեդիտորական պարտքեր ապրանքների ձեռքբերումների գծով (ծան. 18)	-	57,561
Առևտրային կրեդիտորական պարտքեր ապրանքների ձեռքբերումների և ծառայությունների գծով	164,674	165,280
Ամորտիզացված արժեքով դասակարգված ֆինանսական պարտավորություններ	**164,674**	**222,841**
Վճարվելիք հարկեր և տուրքեր	73,118	9,380
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների գծով	879	1,397
Ընդամենը պարտավորություններ	**238,671**	**233,618**

Ֆինանսական գործիք ճանաչված կրեդիտորական պարտքերը արտահայտված են հետևյալ արժույթներով

	2022 հազ.դրամ	2021 հազ.դրամ
ՀՀ դրամ	164,119	57,561
ԱՄՆ դոլար	555	165,280
	164,674	**222,841**

16. Վարձակալություն

Ընկերությունը դասակարգել է առևտրային կենտրոններում վարձակալված տարածքները որպես գործառնական վարձակալություն՝ համարելով, որ ըստ էության իրեն չեն փոխանցվել սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալական վճարները ունեն փոփոխական մաս, որը հիմնականում առընչվում է ամսական վաճառքների ցուցանիշի հետ:
Վարձակալական ամսական վճարները անմիջապես ծախսագրվում են շահույթի և վնասի հաշվետվությունում և ներկայացված են իրացման և վարչական ծախսերում (ծան.7 և 8):

Չեղյալ չհամարվող գործառնական վարձակալությունների շրջանակներում ապագա նվազագույն վարձավճարները ներկայացված են ստորև

	2022 հազ.դրամ	2021 հազ.դրամ
Ոչ ուշ քան մեկ տարի	459,718	352,154
	459,718	**352,154**

17. Կանոնադրական կապիտալ

2022 թվականի դեկտեմբերի 31-ի և 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կանոնադրական կապիտալը բաղկացած է 1000 բաժնեմասերից, 1 բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1,299,260 դրամ: Ընկերության բաժնեմասերը բաշխված են Էլ Սի Ուայկիկի Ջի Ի ՍՊԸ (99,9%) և Թեմա Ռիթեյլ Ար Յու ՍՊԸ (0,1%) միջև:
Ընկերության մասնակիցները իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի մասը և քվեարկել Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում՝ մեկ ձայն սկզբունքով:
2022 թվականին, ինչպես և 2021 թվականին, շահաբաժիններ չեն հայտարարագրվել:

18. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հավանական փոխկապվածություն դիտարկելիս հաշվի է առնվում կապակցվածության էությունը և ոչ միայն իրավական կողմը:
Ընկերության բաժնեմասերը բաշխված են Էլ Սի Ուայկիկի Ջի Ի ՍՊԸ (99,9%) և Թեմա Ռիթեյլ Ար Յու ՍՊԸ (0,1%) միջև: Այլ կապակցված կողմեր առկա չեն:

Առևտրային գործարքներ

	Գործարքի գումար		Կապակցված կողմին վճարվելիք մնացորդ		Կապակցված կողմից ստացվելիք մնացորդ	
	2022	2021	2022	2021	2022	2021
Գործարքները ընդհանուր վերահսկողության տակ գտնվող անձանց հետ	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ	հազ.դրամ
Ապրանքների և ծառայությունների գնում	4,611,784	1,988,758	-	57,561	-	

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ ընկերության տնօրենը և գլխավոր հաշվապահը:
Առանցքային ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

	Գործարքի գումարը	
	2022	2021
	Հազ.դրամ	Հազ.դրամ
Աշխատավարձ, պարգևատրումներ և այլ հատուցումներ, ներառյալ հարկերը	17,071	14,647

19. Պայմանական պարտավորություններ

19.1. Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը դեռևս չունի բիզնեսի ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ Ընկերության գործունեությունից բխող պատասխանատվության ապահովագրության ամբողջական ծածկույթ:

19.2. Պայմանական պարտավորություններ և պահուստներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

19.3. **Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ**

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

19.4. **Երաշխիքներ**

31.03.2022թ. Ամերիա Բանկ ՓԲԸ-ի հետ կնքվել է բանկային երաշխիքի պայմանագիրը, որը հանդիսանում է Դալմա Ինվեստ ՍՊԸ-ի հետ 05.06.2014թ. կնքված հիմնական վարձակալության պայմանագրով ստանձնած պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում: Երաշխիքի գումարը կազմում է 54,993 հազար դրամ:

19.5. **Հարկային պարտավորվածություններ**

ՀՀ հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ ՀՀ գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմիններ ըկարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

19.6. **Գնման պարտականություններ**

2022 և 2021թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի էական չկատարված պարտականություններ հիմնական միջոցների գնումների գծով:

20. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2023 թվականի Օգոստոս ամսվա վերջին պլանավորված է Գյումրու մասնաճյուղի փակումը:

Ընկերությունն այս պահին գնահատում է, որ վերջինիս ազդեցությունը Ընկերության հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա կլինի գրեթե զրոյական, քանի որ մասնաճյուղը չէր աշխատում շահույթով, այլ միտված էր ապրանքանիշի ճանաչելիության բարձրացմանը:

21. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ Դրամը, որը հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով հազարների ճշտությամբ:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման գծով կորուստը:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալացումները ամորտիզացվում են վարձակալության ժամկետից կամ այդ պայմանագրի հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ժամկետից առավել կարճի ընթացքում:

Ընկերության կողմից ճանաչված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը մեկը ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցի դաս	Օգտակար ծառայության ժամկետը
Վարձակալված ակտիվի վրա կապիտալացումներ	10 տարի
Մեքենաներ սարքավորումներ	1 տարի
Արտադրատնտեսական գույք	8 տարի
Այլ գույք	8 տարի

Պաշարներ

Պաշարները հավառվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների արժեքը հաշվառվում է՝ օգտագործելով միջին կշռված արժեքի մեթոդը և ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների Ընկերության) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների Ընկերության) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների Ընկերությունը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների Ընկերության) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների Ընկերության) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Ֆինանսական գործիքներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, ինչպես նաև դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումներ, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները: Բանկային օվերդրաֆտները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են ընթացիկ պարտավորություններում վարկերի և փոխառությունների ներքո:

Ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական պարտավորությունները դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող:
Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային կրեդիտորական պարտքը, որոնք չափվում են ամորտիզացիոն արժեքով:

Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկվող շահույթի հաշվարկման նպատակով օգտագործվող հարկային բազաների ժամանակավոր տարբերությունների գծով:
Հետաձգված հարկային ակտիվ ընդհանուր առմամբ պետք է ճանաչվի բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որն ակնկալվում է, որ կկիրառվի ակտիվի իրացման կամ պարտավորության կատարման ժամանակ՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները) որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով կազմակերպությունը, հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Կանոնադրական կապիտալ և շահաբաժիններ
Ընկերության բաժնեմասերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:
Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են վճարման ենթակա. բաժնետերերին վճարվող միջանկյալ շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հայտարարվում են տնօրենների կողմից, վերջնական շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հաստատվում են բաժնետերերի կողմից տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, որոնց մարման սկզբնական ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները:

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են իրավականորեն վճարման ենթակա. բաժնետերերին վճարվող միջանկյալ շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հայտարարվում են տնօրենների կողմից, վերջնական շահաբաժինների դեպքում՝ երբ դրանք հաստատվում են բաժնետերերի կողմից տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտավորություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտավորությունը, և պարտավորության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:
Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտավորությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտավորությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտավորությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Հասույթ

Ընկերության հասույթի զգալի մասը ձևավորվում է ապրանքների վաճառքից, իսկ հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքների վերահսկողությունն արդեն իսկ փոխանցվել է հաճախորդին: Սա հիմնականում տեղի է ունենում այն ժամանակ, երբ ապրանքները տրամադրվում են հաճախորդին: Այս պահը (երբ վերահսկողությունը փոխանցվում է) որոշելու համար անհրաժեշտ է սահմանափակ դատողություն. ապրանքի ֆիզիկական տրամադրումը խանութի տարածքում տեղի ունենալուց հետո Ընկերությունը զրկվում է փաստացի տիրապետման իրավունքից, սովորաբար ունենում է վճարում ստանալու ներկա իրավունք (որպես միանվագ վճար առաքման պահին) և չի պահպանում տվյալ ապրանքների հետ կապված նշանակալի ռիսկերը և հատուցումները:
Ընկերության հասույթը չափում է ապրանքների համար սահմանված հստակ գնով: